ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

17 մայիսի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

69
(2735)

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

100 դրամ

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 179

«Ժողովուրդ» օրաթերթի իշխանամերձ աղբյուրները փոխանցում են, որ ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Հասմիկ Հակոբյանը շարունակում է իր հարազատներին, մտերիմներին «խնամի-ծանոթ-բարեկամ» սկզբունքով տեղավորել աշխատանքի: Բանն այն է, որ իշխանական պատգամավոր Հակոբյանն իր ազգական Նինա Հակոբյանին աշխատանքի է տեղավորել ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանի մոտ՝ որպես գործավարուհի: Հիշեցնենք, որ դեռեւս մայիսի 3-ի համարում գրել էինք, որ իշանական խմբակցության պատգամավոր Հասմիկ Հակոբյանը պատգամավորի օգնականից պատգամավոր դառնալուց հետո հասցրել է հարազատ հորը՝ Արմեն Հակոբյանին տեղավորել ԱԺ-ում՝ աշխատանքի: Արմեն Հակոբյանը ԱԺ վարչատնտեսական վարչության ավտոտրանսպորտային բաժնում է աշխատում: Իսկ մայիսի 5-ի համարում գրել էինք, որ Հասմիկ Հակոբյանի քրոջ ամուսինը՝ Վարոն եւս աշխատում է Ազգային ժողովում: Նա ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի վարորդն է: Պատգամավորը չէր հերքել, որ բարեկամներին գործի է տեղավորել: Հիշեցնենք, որ 2018-ի օգոստոսի 9-ին Նիկոլ Փաշինյանը, ոգեւորված հեղափոխությունից, հենց կառավարության նիստում հայտարարեց. «Կառավարման համակարգը ո՞նց է աշխատել մինչեւ հիմա՝ հորքուր, մորքուր, խնամի, ծանոթ, բարեկամ, ընտրությունների վստահված անձ, բոլորին բերել լցրել են պետական կառավարման համակարգ, իսկ հիմա նման խնդիր չկա դրված»: Փաստորեն, նաեւ այս հարցում է խաբել Նիկոլ Փաշինյանը, եւ հենց նրա ՔՊ-ական թիմակիցները իրենց ազգականներին եւ բարեկամներին «լցնում են» պետական համակարգ:

Շարունակելի...

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության՝ Սայաթ-Նովա փողոցում գտնվող կենտրոնական գրասենյակը տեղափոխվելու է Հանրապետության փողոց: Այս օրերին ՔՊ-ում վերանորոգման եւ տեղափոխման աշխատանքների հետ կապված եռուզեռ է: Մեզ հետ զրույցում ՔՊ կուսակցության աշխատակազմի ղեկավար Արուսյակ Մանավազյանը հաստատեց գրասենյակի տեղափոխման մասին տեղեկությունը՝ նշելով, որ դեռ վերանորոգման աշխատանքներ են գնում, ուստի հայտնի չէ, թե երբ կտեղափոխվեն: «Չգիտենք՝ որքան կտեւի վերանորոգումը, հնարավոր է՝ մեկ տարի տեւի»,-ասաց նա: Ի դեպ, Հանրապետության փողոցի վրա է գտնվում նաեւ ՀՅԴ կենտրոնական գրասենյակը, որից մի փոքր այն կողմն էլ ՀՀԿ գրասենյակն է: Ստացվում է՝ ՔՊ-ն գալիս է իր սիրելի նախկիններին հարեւան: Իսկ ի՞նչ ճանապարհով է իշխանական կուսակցությունը ձեռք բերել գրասենյակը. գնե՞լ են արդյոք, թե՞ էլի նվեր են ստացել, ինչպես նախորդ տարիներին, ինչի առիթով «Ժողովուրդ» օրաթերթը բացահայտում էր արել: Կոռուպցիան մերժող Նիկոլ Փաշինյանի ղեկավարած ՔՊ-ի վերաբերյալ «ԹՄ աուդիտ» ՓԲԸ-ն եզրակացություն էր ներկայացրել, համաձայն որի՝ կուսակցությունը կատարել է 9 մլն 64 հազար դրամի կանխիկ դրամական վճարումներ: Բացի այդ, ՔՊ-ն իրավաբանական անձանցից ստացել է 16 մլն 300 հազար դրամի աջակցություն, բայց պարզ չէ՝ ովքեր են խորհրդավոր նվիրատուները: Նաեւ երկու իրավաբանական անձանցից բնեղեն նվիրատվություններ է ստացել՝ տարածքի տեսքով, բայց էլի պարզ չէ, թե ովքեր են իշխող ՔՊ-ին նվերներ տվել: Բացահայտվել է նաեւ, որ 525 նվիրատուների մասով որեւէ տեղեկություն առկա չէ: Կոռուպցիայի դեմ պայքարելու համար իշխանության եկած Նիկոլ Փաշինյանն ու իր թիմը թաղվել են կոռուպցիայի մեջ, նաեւ կուսակցության վարչության ընտրություններն են կեղծել:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ մայիսի 4-ին Գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի ԱԺ մշտական հանձնաժողովի նախագահ Սիսակ Գաբրիելյանը քրեական գործի շրջանակներում վերջապես ներկայացել է Շենգավիթի դատարան: Տեղեկացանք, որ նա դատավորին հարցրել է, թե իր ներկայությունը պարտադիր է արդյոք բոլոր նիստերին: Դատավորը պատասխանել է, որ կան նիստեր, որտեղ իր ներկայությունը պարտադիր է, ուստի ծանուցման դեպքում պետք է ներկայանա: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Երեւան քաղաքի դատարանը մի քանի անգամ ծանուցում է ուղարկել ԱԺ ՔՊ խմբակցության պատգամավոր Սիսակ Գաբրիելյանին՝ներկայանալու իր գործով դատական նիստերին, սակայն իշխանական պատգամավորը չի ներկայացել եւ պատճառաբանել է, թե ծանուցում չի ստացել: Դատական համակարգը որոշել է Գաբրիելյանին ծանուցում ուղարկել ՀՀ Ազգային ժողովի միջոցով, որպեսզի նա ներկայանա դատարան, սակայն այդ անգամ էլ վերջինս չէր ներկայացել քանի որ գործուղման է եղել: Մայիսի 4-ին նա ներկայացել է: Իսկ ի՞նչ գործի մասին է խոսքը: «Հայաստան» խմբակցության պատգամավոր, Արագածոտնի նախկին մարզպետ Աշոտ Սիմոնյանին մեղադրանք է առաջադրվել, որ նա, մասնակցելով 2020 թվականի դեկտեմբերի 28-ին՝ժամը 09:00-ից մինչեւ 11:30-ն ընկած ժամանակահատվածում Երեւան քաղաքի Դեմիրճյան փողոցում՝ Ազգային ժողովի մոտ անցկացվող հավաքին, խոչընդոտել է աշխատանքի վայր ժամանող Ս. Գաբրիելյանի երթեւեկը, հնչեցրել անպարկեշտ արտահայտություններ: Այս գործը քննում է ԲԴԽ անդամ Սերգեյ Չիչոյանի եղբորորդին՝ Ժորա Չիչոյանը:

«Ժողովուրդ» օրաթերթը վիճակագրական տվյալներից տեղեկացավ, որ Հայաստանում թմրամոլության ցուցանիշները վերջին տարիներին կտրուկ աճել են: Եւ այսպես, պաշտոնական տեղեկության համաձայն՝ Հայաստանում թմրամիջոցների հետ կապված գրանցված հանցագործությունների թիվը 2016թ.-ին եղել է 1088, 2017թ.-ին՝ 1271 դեպք, 2018թ.-ին՝ 877 դեպք, 2019թ.-ին՝ 1088 դեպք, 2020թ.-ին՝ 1226 դեպք, 2021թ.-ին՝ 1544 դեպք, իսկ 2022թ.-ին՝ 2268 դեպք: Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ Նիկոլ Փաշինյանի հեղափոխական իշխանության օրոք թմրանյութերի օգտագործման առիթով գրանցված հանցագործությունների թիվը կտրուկ աճել է: Սա նկատելի է նաեւ իշխանական շատ պատգամավորների վարքագծից: «Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության քարտուղար Արթուր Հովհաննիսյանը 2017 թվականին բերման է ենթարկվել ոստիկանություն՝ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հետ կապված ենթադրյալ հանցանք կատարելու կասկածանքով: Ավելին՝ անգամ քրեական գործ է հարուցված եղել, որը 2018թ.-ին կարճվել է: Իշխող ՔՊ խմբակցության մեկ այլ պատգամավոր էլ՝ Էդուարդ Աղաջանյանը, ԱԺ-ում տարօրինակ հայտարարություն էր արել, թե այսօր որեւէ միջին վիճակագրական խնջույք առանց թմրանյութերի չի անցնում: Ստացվում է, որ թմրանյութի հետ կապված բոլոր հարցերն ու խնդիրները պետք է փնտրել իշխանության ներսում. փաստերն են դրա մասին վկայում: Հիշեցնենք՝ երեկ էլ պարզ դարձավ, որ Իտալիայի Ջոյա Տաուրո քաղաքի նավահանգստում ռեկորդային քանակի կոկաին են առգրավել (2.7 տոննա): Թմրանյութի փաթեթները թաքցված են եղել Էկվադորից ժամանած երկու բեռնարկղերում, որոնցով տեղափոխվում էր 78 տոննա բանան: Կոկաինը նախատեսված էր Վրաստանի Բաթումիի նավահանգստով Հայաստան ուղարկելու համար: ՊԵԿ-ը հայտարարել է, թե չգիտեն՝ում անունով էր թմրանյութերով թաքնված բանանի բեռը Հայաստան մտնելու:

ԿԱՐՈ՞Ղ ԵՆՔ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼ

ԱՐՑԱԽՆ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԻ

Նիկոլ Փաշինյանի եւ Ալիեւի՝ կիրակի օրվա բրյուսելյան հանդիպումից հետո Եվրոպական խորհրդի նախագահ Շառլ Միշելը հայտարարեց, որ հաջորդ քայլը լինելու է դելիմիտացիան՝ 1992թ.-ի Ալմա-Աթայի հռչակագրով, որը ենթադրում է Հայաստանի տարածքային ամբողջականության ճանաչում՝ 29,8 հազար քառ/կմ-ի սահմաններում, եւ Ադրբեջանինը՝ 86,6 հազար քառ/կմ-ի սահմաններում:



Այս առիթով «Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է քարտեզագետ Ռուբեն Գալչյանի հետ:

-Պարոն Գալչյան, կմանրամասնե՞ք՝ ինչ է սա ենթադրում, որ տարածքների մասին է խոսքը:

-1991թ.-ին, երբ Ալմա-Աթայում որոշվեց, որ 12 հանրապետություններն անկախանում են, սկսեցին գործածվել խորհրդային ժամանակվա քարտեզներ, որոնք պատրաստվել էին 1971-1975 թվականներին: Խորհրդային Միության ժամանակվա քարտեզների մասին է խոսքը, որոնք գրեթե բոլորին են ծանոթ, այնպես որ, նորություն չէր Փաշինյանի ասածը: Նա վերահաստատեց, որ այդ նույն քարտեզները կլինեն հիմք մեր եւ Ադրբեջանի համար՝ միմյանց տարածքները ճանաչելու: Մենք առաջին անգամ տարածքները ճանաչել ենք 1991 թվականին, այդ ժամանակ էլ Հայաստանը 29,800 ք/կմ ուներ իր գծված սահմանների ներսում, իսկ Ադրբեջանը ուներ 86,600 ք/կմ: Ես կարող եմ անցում անել նաեւ ավելի հին քարտեզների, երբ Խորհրդային Միությունը կազմավորվեց, Հայաստանի Հանրապետությունը եւ Ադրբեջանը միացան Խորհրդային Միությանը: Մինչեւ 1926 թվականը խորհրդական շտաբը պատրաստել էր երկու երկրների սահմանների քարտեզներ, բայց այդ քարտեզները գաղտնի պահվեցին եւ մինչ օրս մեզ չեն տրվել, բայց մեզ հասել է 1926 թվականի խորհրդային մեծ հանրագիտարանի առաջին հրատարակությունը, որի մեջ 2 քարտեզ կա՝ մեկը՝ Հայաստանի Հանրապետության, մյուսը՝ Ադրբեջանի Հանրապետության: Այդ քարտեզների մեջ Հայաստանն ուներ ոչ թե 29. 800ք/կմ տարածք, այլ շուրջ 31. 000 ք/կմ տարածք, իսկ Ադրբեջանն ուներ 85.000 ք/կմ տարածք: Ժամանակի ընթացքում մեր տարածքներից վերցվել եւ տրվել են Ադրբեջանին. այդ տարածքները Ադրբեջանի տարածքներ են հաշվում խորհրդային ժամանակվա քարտեզների մեջ: Այսինքն՝ այդ տարածքները Հայաստանի տարածքներն են, դրանց մեջ Ալ լճերն է, որը հետո տրվեց Ադրբեջանին, Իշխանասարը, Արծվաշենը՝ իր ընդհանուր տարածքով. այս բոլորը Հայաստանի տարածքում էին: Հետագայում որոշ պատրվակներով Ադրբեջանը հայտարարեց, որ այդ տարածքում ստեղծելու են Կարմիր Քուրդիստան գավառ, եւ քրդերի համար կարիք կա արոտավայրեր ստեղծելու, որոնք քիչ են, հետեւաբար Հայաստանի արոտավայրերից խնդրում են հատկացնել որոշ մաս: Այդ ընթացքում, առանց տեղի ժողովրդի հետ քննարկումների, Ադրբեջանին հատկացվեց 1000 ք/կմ-ից ավել տարածք, եւ Հայաստանը դարձավ 29.800 ք/կմ: Մենք ունենք նաեւ այդ ժամանակվա Ադրբեջանի քարտեզ, որը հրատարակվել է նույն ժամանակահատվածում հանրագիտարանի մեջ: Այնտեղ նույնպես Արցախը եւ Հայաստանը կից են, սակայն, ըստ նրանց քարտեզի, Արցախը ներառված է Ադրբեջանի կազմի մեջ, եւ Ադրբեջանն ունի 85. 000 ք/կմ տարածք: Քանի որ մենք Խորհրդային Միության ժառանգներ ենք եղել, մենք համաձայնել ենք, որ ճանաչենք Ադրբեջանին իր այսօրվա սահմաններով: Հետագայում՝ սահմագծման ժամանակ, մենք կարող ենք ասել, որ մեր տարածքներից որոշ հատվածներ ձեզ են տրվել ապօրինի եղանակով, առանց տեղացիների հետ խորհրդակցելու. պետք է իրավաբանական խնդիրներ առաջ քաշենք, որպեսզի հասկանանք՝ կարող ենք արդյոք մեր ունեցած հին տարածքները վերադարձնել:

-Պարոն Գալչյան, ստացվում է՝ եթե Բրյուսելում ձեռք բերված պայմանավորվածություններն ի կատար ածվեն, այդ ամենը փաստաթղթի տեսք ստանա, եւ երկրները միմյանց տարածքային ամբողջականությունը ճանաչեն՝ ըստ 1991թ.-ի քարտեզների, դա ենթադրում է արդյոք, որ Հայաստանը ճանաչում է Արցախն Ադրբեջանի կազմում:

-Արցախը, ինչպես տեսնում ենք քարտեզի մեջ, ամբողջությամբ Ադրբեջանի կազմի մեջ է. դա մենք ընդունել ենք 1991թվականին, այնպես չէ, որ այն մենք այսօր ենք ընդունում, 1991 թվականին վավերացրել ենք դա երկկողմանի: Բայց Արցախն ինքնորոշման իրավունք ունի, այսինքն՝ ինքը կարող է որոշել՝ ինչ է ուզում լինի իր ճակատագիրը, ինչպես, օրինակ, 1991 թվականին հանրաքվեով որոշեցին դառնալ անկախ երկիր: Ցավոք սրտի, Հայաստանի իշխանությունները մի քանի տարի հետո այդ հանրաքվեն չեղարկեցին. պարոն Քոչարյանը դա չեղարկեց Մադրիդում: Արցախի ժողովրդի որոշումն էր դա, Հայաստանի նախագահը իրավունք չուներ չեղարկելու, նրա իրավասություններից դուրս էր դա, տեղի ժողովուրդը կարող էր չեղարկել դա, քանի որ իր որոշումն էր: Այժմ կրկին Արցախի ժողովուրդը իրավունք ունի հանրաքվեով իր որոշումն արտահայտել, իսկ մենք կարող ենք նրանց միայն սատարել: Մենք ոչինչ չենք կարող որոշել նրանց փոխարեն, քանի որ բառը «ինքնորոշում» արդեն ասում է, որ իրենք պետք է որոշեն:

-Պարոն Գալչյան, խոսում եք խորհրդային ժամանակվա քարտեզների մասին, բայց գիտենք, որ Ադրբեջանը իրեն պաշտոնապես չի ճանաչում Խորհրդային Ադրբեջանի իրավահաջորդ:

-Այո՛, Ադրբեջանն իրեն ճանաչել է մուսավաթային կառավարության ժառանգ: Շատ լավ, եթե նրա ժառանգներն են, ապա այդ ժամանակ անկլավ գոյություն չուներ Հայաստանում: Հայաստանի տարածքը Հայաստանինն էր ամբողջովին, իսկ անկլավները տրվեցին Ադրբեջանին Խորհրդային Միության կողմից: Նախիջեւանը եւս իրենց տարածքում չէր, Նախիջեւանը Լենինը նվիրեց Ադրբեջանին: Արցախը դեռ այն ժամանակ վիճելի հարց էր, բայց Ստալինը որոշեց տալ Ադրբեջանին: Խորհրդային Միության որոշումները չպետք է ընդունի Ադրբեջանը: Անկլավը մի կողմ դնենք. իրենց սահմանադրության ակտի 2-րդ հոդվածում ասվում է, որ ժառանգներն են մուսավաթային Ադրբեջանի, ուրեմն անկլավներ պահանջելու իրավունք չունեն՝ ըստ իրենց սահմանադրության:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՎԱՐԺԱՆՔ ԿԱՆՑԿԱՑՎԻ

ArmLur.am-ի տեղեկություններով՝ 2023թ. օգոստոսի 1-ից մինչեւ հոկտեմբեր 13-ը կանցկացվեն պահեստազորայինների վարժական հավաքներ:

Բացի այդ, վարժական հավաքների ապահովման, այդ թվում նաեւ՝ ձեւավորված առաջնագծում ինժեներական աշխատանքների կատարման նպատակով անհրաժեշտություն է առաջացել ռազմատրանսպորտային պարտականություն ունեցող մարմիններից ներգրավել համապատասխան տեսակի եւ քանակի տրանսպորտային միջոցներ:

Այսպիսով, հայտարարված վարժական հավաքների ընթացքում յուրաքանչյուր քաղաքացի ներգրավվում է ոչ ավելի, քան 25 օրացույցային օր ժամկետով, վարժական հավաքներ անցկացվում են հետեւյալ փուլերով.

-2023 թվականի օգոստոսի 1 - 25-ը ներառյալ՝ ներգրավելով մինչեւ 788 քաղաքացի, որոնցից 708-ը՝ շարքային եւ կրտսեր ենթասպայական կազմերի, 25-ը՝ ավագ ենթասպայական կազմի, 55-ը՝ սպայական կազմի պահեստազորայիններ,

- 2023 թվականի օգոստոսի 3 - 27-ը ներառյալ՝ ներգրավելով մինչեւ 56 շարքային եւ կրտսեր ենթասպայական կազմերի պահեստազորայիններ,

-2023 թվականի օգոստոսի 15-ից մինչեւ սեպտեմբերի 8-ը ներառյալ՝ ներգրավելով մինչեւ 388 քաղաքացի, որոնցից 349-ը՝ շարքային եւ կրտսեր ենթասպայական կազմերի, 17-ը՝ ավագ ենթասպայական կազմի, 22-ը՝ սպայական կազմի պահեստազորայիններ,

- 2023 թվականի օգոստոսի 29-ից մինչեւ սեպտեմբերի 22-ը ներառյալ՝ ներգրավելով մինչեւ 420 քաղաքացի, որոնցից 376-ը՝ շարքային եւ կրտսեր ենթասպայական կազմերի, 18-ը՝ ավագ ենթասպայական կազմի, 26-ը՝ սպայական կազմի պահեստազորայիններ,

- 2023 թվականի սեպտեմբերի 4 - 28-ը ներառյալ՝ ներգրավելով մինչեւ 350 քաղաքացի, որոնցից 313-ը՝ շարքային եւ կրտսեր ենթասպայական կազմերի, 25-ը՝ ավագ ենթասպայական կազմի, 12-ը՝ սպայական կազմի պահեստազորայիններ,

- 2023 թվականի սեպտեմբերի 19-ից մինչեւ հոկտեմբերի 13-ը ներառյալ՝ ներգրավելով մինչեւ 350 քաղաքացի, որոնցից 313-ը՝ շարքային եւ կրտսեր ենթասպայական կազմերի, 25-ը՝ ավագ ենթասպայական կազմի, 12-ը՝ սպայական կազմի պահեստազորայիններ:

Վարժական հավաքների ապահովման համար 2023 թվականի օգոստոսի 1-ից մինչեւ հոկտեմբերի 13-ը ներառյալ ռազմատրանսպորտային պարտականություններ ունեցող մարմիններից ներգրավել մինչեւ 205 միավոր տրանս-պորտային միջոց՝ յուրա-քանչյուր տրանսպորտային միջոցի ներգրավումը ոչ ավելի, քան 7 օրացույցային օր ժամկետով, բացառությամբ ճանապարհաշինարարական տրանսպորտային միջոցների, որոնց ներգրավումը ոչ ավելի, քան 25 օրացուցային օր ժամկետով:

ԿԺԱՄԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Հունիսի 7-9-ը Հայաստան կժամանի Բունդեսթագի արտաքին հարաբերությունների հանձնաժողովի նախագահ Միխայել Ռոթի գլխավորած պատվիրակության ընդունելությունը:

ArmLur.am-ը ԱԺ-ից տեղեկացավ, որ Գերմանիայից ժամանող պատվիրակությանը ՀՀ-ում կդիմավորի ԱԺ արտաքին հարաբերությունների մշտական հանձնաժողովի նախագահ Սարգիս Խանդանյանը:

Պատվիրակության ընդունելությունը կկազմակերպվի ՀՀ պետական բյուջեի հաշվին:

ԿՐԿԻՆ ՆՈՐԱԾԻՆ ԵՆ ԹՈՂԵԼ

Ի՞նչ է կատարվում Արցախի փողոցի 8/4 շենքում, ինչո՞ւ են մայրերը լքում իրենց նորածիններին եւ դեպքի վայր ընտրում Արցախի փողոցի 8/4 շենքը:

Եվ այսպես, մայիսի 11-ին Երեւանի Արցախի պողոտայի 8/4 հասցեում նորածին երեխա էին գտել:

Ժամը 14:00-ի սահմաններում Սիրան Բադալյանը աշխատանքից վերադառնալիս Արցախի փողոցի 8/4 շենքի հարակից կիսակառույց շինության մոտից երեխայի ձայն էր լսել: Մոտեցել էր շինությանը, որտեղ նկատել էր նորածին երեխային. վերցնելով երեխային՝ տարել է բնակարան, այնուհետեւ զանգահարել է շտապօգնություն: Շտապօգնության մեքենան շտապել էր դեպքի վայր եւ երեխային տեղափոխել էր «Մուրացան» բժշկական կենտրոն: Պարեկներն ու ոստիկանները պարզել են նաեւ, թե որտեղ է նորածին աղջիկը հայտնաբերվել, ում պորտալարը դեռեւս կտրված չի եղել:

Այս դեպքից անցել է 5 օր, եւ մինչ օրս իրավապահները չեն հայտնաբերել երեխայի մորը, որը նրան թողել էր Արցախի փողոցի 8/4 շենքի բակում:

Նկատենք, որ 2 տարի առաջ կրկին Արցախի փողոցի 8/4 շենքում նորածին երեխային թողել էին ու հեռացել, ու մինչ օրս մայրը հայտնաբերված չէ: Մասնավորապես, 2021 թվականի հուլիսի 13-ին ոստիկանության էրեբունու բաժին էր ահազանգել Երեւանի Արցախի փողոցի 8/4 շենքի բնակիչ Լուսինե Գալստյանը եւ հայտնել, որ իր հարեւանուհու բնակարանի մուտքի մոտ նորածին են թողել: Երեխային տեղափոխել էին «Մուրացան» համալսարանական հիվանդանոց: Հիվանդանոցի մանկական եւ նորածնային վերակենդանացման կլինիկայի ղեկավար Հրանտ Կալենտերյանը Factor.Tv-ին հայտնել էր, որ նորածին աղջնակը բնածին արատներ չունի, սակայն ոչ հիվանդանոցային պայմաններում պահվելու հետեւանքով ունի վարակներ:

Բժիշկները ենթադրում են, որ վարակը կարող է անցած լինել չմշակված պորտալարով: Փոքրիկը ծնվել է 2 կիլոգրամ 600 գրամ քաշով:

Ինչո՞ւ են ծնողները իրենց երեխային թողնում հենց Արցախի փողոցի 8/4 շենքի բակում եւ հեռանում. այս հարցի պատասխանը դեռեւս չկա, քանի որ իրավապահները չեն հայտնաբերել մայրերին:

ԱՐՑԱԽ

ԴԱ ՊԼԱՆԱՎՈՐՎԱԾ ՔԱՅԼ Է

Երեկ Ստեփանակերտում Սամվել Բաբայանը կազմակերպել էր հավաք, որի մասնակիցների հիմնական պահանջը Սամվել Բաբայանին լայն լիազորություններով պետական նախարարի պաշտոն տալն էր: Թեեւ հավաքը մասնակիցների թվի առումով համոզիչ չէր, այդուհանդերձ Արցախի Հանրապետության նախագահը հայտարարեց, որ պատրաստ է քննարկել ու լսել Ս. Բաբայանի առաջարկներն ու ծրագրերը:

Սամվել Բաբայանի հավաքից հետո կրկին շրջանառության են դրվել Արցախի ներքաղաքական վիճակի վերաբերյալ ամենատարբեր վարկածներ: Նշվում է, թե Արցախում մտավախություններ կան, որ տասնօրյա ժամկետում Արցախի պետական նախարար Գուրգեն Ներսիսյանը, որը Սամվել Բաբայանի ազգականն է, նշանակվելու է գլխավոր դատախազի պաշտոնում, իսկ Սամվել Բաբայանը նշանակվելու է պետական նախարար:

ArmLur.am-ը կապ հաստատեց Արցախի պետական նախարար Գուրգեն Ներսիսյանի հետ եւ առաջարկեց մեկնաբանություն տալ վերը նշվածի կապակցությամբ, ինչին ի պատասխան՝ պետական նախարարը նշեց հետեւյալը. «Սամվել Բաբայանի հետ որեւէ հարաբերություն կամ շփում չունեմ, ընդամենը մեկ անգամ եմ նրա հետ հանդիպել, նրա հետ որեւէ ազգակցական կապ չունեմ՝ ո՛չ մոտիկ, ո՛չ հեռու, նման հայտարարությունները ակնհայտ սուտ են: Ես զբաղեցնում եմ Արցախի պետական նախարարի պաշտոնը, որեւէ այլ տեղ տեղափոխվելու նպատակ եւ մտադրություն չունեմ: Մոտավորապես պատկերացնում եմ, թե ովքեր են նման լուրեր տարածողները, բայց զերծ կմնամ մեկնաբանություններից: Երբ որոշ շրջանակներ, ներքին պառակտում հրահրելով ու բամբասանքներ տարածելով, համերաշխություն, միասնություն, արդարություն եւ հայրենիքի փրկություն են գոչում, այդ ընթացքում Արցախի կառավարությունը լուռ աշխատանքով փորձում է թեթեւացնել Արցախի ժողովրդին պատուհասած խնդիրները, լուծել բազմաթիվ պրոբլեմները: Հավատացե՛ք՝ որքան էլ զարմանալի թվա, կան մարդիկ ու շրջանակներ, որ այդ աշխատանքը, հատկապես՝ արդյունավետ աշխատանքը, ծանր են տանում, այդ պատճառով պարբերաբար պատմություններ են հորինում: Շատերը պատկերացում չունեն, թե մենք ինչ դժվարություններ ենք ստիպված հաղթահարել այս վիճակում, եւ ինչ ծավալի աշխատանք է կատարվում մեր առջեւ ծառացած մարտահրավերները հաղթահարելու համար, բայց երբ այդ ամենին զուգահեռ նման քայլեր են արվում, ուղղակի հիասթափվում ես ոմանց վրա»:

Բաբայանի հրավիրած հանրահավաքին մասնակցում էր նաեւ Արցախի ԱԺ նախագահ Արթուր Թովմասյանը:

Հանրահավաքի ժամանակ հնչած հայտարարություններից պարզ է դառնում, որ պահանջը Սամվել Բաբայանին Արցախի պետնախարար նշանակելն է:

Արցախի նախագահ Արայիկ Հարությունյանն էլ երեկ հայտարարություն տարածեց, որ որոշել է ընդառաջ քայլ կատարել եւ հավաքի ներկայացուցիչներին առաջարկել է քննարկումներ ու խորհրդակցություններ սկսել նրանց կողմից ներկայացված առաջարկների ու ծրագրերի շուրջ:

ArmLur.am-ի հետ զրույցում Արցախի ԱԺ պատգամավոր Դավիթ Գալստյանը, անդրադառնալով Սամվել Բաբայանի՝ պետնախարար նշանակվելու հավանականությանը, ասում է՝ ամեն ինչ հնարավոր է. «Մենք ունենք այդ դառը փորձը, երբ մի խումբ քաղաքացիներ հավաքվում են եւ պաշտոն են ուզում կամ ուզում են որեւէ մեկին պաշտոնից ազատել: Արայիկ Հարությունյանը նման վատ նախադեպեր ստեղծել է, երբ մարդ պաշտոն ստանալու համար դրան փորձում է մասնակից դարձնել մյուս քաղաքացիներին: Սա չի արտահայտում ժողովրդի հավաքական կամքը»:

ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆԸ ՀՆԱՐԱՎՈՐ Է

«ԱՄՆ-ն հավատացած է, որ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ բանակցություններն առաջ գնալու կարեւոր քայլեր են»,- հայտնել է ԱՄՆ պետքարտուղարության խոսնակի առաջին տեղակալ Վեդանտ Պատելը՝ անդրադառնալով Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների միջեւ Բրյուսելում կայացած հանդիպմանը:

«ԱՄՆ-ն այդ բանակցությունների կողմ չէր, սակայն որպես Արլինգտոնում մեր հյուրընկալած բանակցությունների շարունակություն, մենք շարունակում ենք հավատալ, որ դրանք առաջ ընթանալու կարեւոր քայլեր են, եւ մենք շարունակում ենք համարել, որ այդ երկու երկրների միջեւ տեւական խաղաղությունը հնարավոր է», - ասել է Պատելը:

ՀԱՊԿ–ԻՑ ԴՈՒՐՍ ԳԱԼՈՒ ՀԱՐՑ ՉԿԱ

ՀՀ արտաքին գործերի փոխնախարար Մնացական Սաֆարյանը չի կարող կոնկրետ ասել, թե երբ է Հայաստանը քննարկել ՀԱՊԿ-ից դուրս գալու տարբերակը:

«Ես կոնկրետ ժամկետ չեմ կարող ասել, որովհետեւ դա, ըստ երեւույթին, քննարկվել է Անվտանգության խորհրդում»,- ԱԺում լրագրողների հետ զրույցում ասաց նա:

Փոխնախարարը կարծում է՝ նման քննարկում եղել է սեպտեմբերյան իրադարձությունների ժամանակ:

Թե ինչու, այնուամենայնիվ, դուրս չի եկել Հայաստանը ՀԱՊԿ-ից, արձագանքեց. «Որոշում է ընդունվել չանել այդ քայլը, շարունակել աշխատանքները, որովհետեւ կան հարցեր, որոնք հետագայում քննարկվեցին ՀԱՊԿ գագաթնաժողովի ընթացքում»:

Հարցին՝ այս պահին կա արդյոք օրակարգում ՀԱՊԿ-ից դուրս գալու հարց, ՀՀ ԱԳ փոխնախարարը պատասխանեց. «Այս պահին չկա այդ հարցը»:

Հիշեցնենք՝ Հայաստանի Հանրապետության անվտանգության խորհրդի քարտուղար Արմեն Գրիգորյանը Новая газета Европа-ին տված հարցազրույցում ասել էր, թե քննարկումներ եղել են Հայաստանի՝ ՀԱՊԿ-ից դուրս գալու մասին:

ԴԱՏԱՐԱՆԻ ՈՐՈՇՈՒՄ

Ի՞ՆՉ Է ՍՊԱՍՎՈՒՄ ԴՊՐՈՑ ՆԵՐԽՈՒԺԱԾ ՏՂԱՄԱՐԴՈՒՆ

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ դատարանը մասամբ է բավարարել ՀՀ ֆինչական կոմիտեի միջնորդությունը՝ 166 հիմնական դպրոց ներխուժած տղամարդուն կալանավորելու մասով: ՀՀ ֆինչական կոմիտեից հայտնել էին, որ դիմել էին դատարան՝ տղամարդու նկատմամբ որպես խափանման միջոց կալանքն ընտրելու միջնորդությամբ, սակայն դատարանը որոշել է տղամարդու նկատմամբ խափանման միջոց ընտրել վարչական հսկողությունը եւ 2 միլիոն դրամի չափով գրավը:



ՀՀ քննչական կոմիտեն տեղեկացրել էր, որ պարզվել են Երեւան քաղաքի հանրակրթական ուսումնական հաստատություններից մեկում տեղի ունեցած խուլիգանության, աշակերտների նկատմամբ կատարված բռնությունների մի շարք էական հանգամանքներ:

Կոմիտեի տարածած հաղորդագրության մեջ նաեւ ասված էր. «Մասնավորապես, ՀՀ ՆԳՆ ոստիկանությունից զեկուցագիր, ինչպես նաեւ քաղաքացիներից հաղորդումներ են ստացվել՝ 2023թ. մայիսի 11-ին՝ ժամը 12:55-ի սահմաններում, մի քանի անձանց կողմից Երեւան քաղաքում գործող հանրակրթական ուսումնական հաստատությունում մանկավարժների եւ աշակերտների հետ վիճաբանության, վերջիններիցս երկուսին հարվածելու եւ վնասվածքներ պատճառելու վերաբերյալ:

Բուժհաստատությունից հաղորդում է ստացվել, որ այդ ուսհաստատությունից նշված օրն իրենց մոտ տեղափոխված երկու անչափահասներից մեկը ստացել է քթի կոտրվածք, մյուսը՝ կզակի ու լեզվի վնասվածք:

Դեպքի առթիվ նույն օրը ՀՀ ՔԿ ԵՔՔՎ Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ, եւ ձեւավորվել է քննչական խումբ:

Վնասվածք ստացած անչափահասները ճանաչվել են տուժող, նրանց վերաբերյալ նշանակվել են դատաբժշկական փորձաքննություններ: Հանցանք կատարած լինելու մեջ անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով՝ նույն օրը ձերբակալվել է մեկ անձ:

Կատարված վարութային եւ ապացուցողական գործողությունների արդյունքում պարզվել է, որ վերջինս քննությամբ դեռեւս չպարզված 4 անձանց հետ խմբի կազմում 2023թ. մայիսի 11-ին՝ ժամը 12:50-ի սահմաններում, մուտք է գործել նշված ուսհաստատություն: Չհարգելով հասարակությանը, արհամարհելով օրենքների եւ բարոյական նորմերի պահանջները՝ նույն դպրոցի աշակերտների կողմից մինչեւ այդ որդուն վիրավորելու չնչին առիթով նա սկսել է վիճաբանել աշակերտների եւ ուսուցիչների հետ: Այդ ընթացքում նույն խուլիգանական մղումներով վերջինս բռունցքով հարվածներ է հասցրել երկու աշակերտների՝ պատճառելով վերոնշյալ մարմնական վնասվածքները, հնչեցրել հայհոյանքներ:

Այդ գործողությունների արդյունքում տեւականորեն խաթարվել է դպրոցի բնականոն գործունեությունը:

Ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա՝նշված անձի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 167-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ եւ 12-րդ կետերով (խուլիգանական դրդումներով անչափահասի առողջությանը միջին ծանրության վնաս պատճառելը), 195-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ եւ 9-րդ կետերով (խուլիգանական դրդումներով անչափահասի նկատմամբ ֆիզիկական ներգործությունը), 297-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետով (մի խումբ անձանց կողմից խուլիգանությունը):

Նրան ներկայացվել է մեղադրանք. վերջինս ամբողջությամբ ընդունել է մեղադրանքը:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՌԵԿՈՐԴԱՅԻՆ ՔԱՆԱԿԻ ԿՈԿԱՀԻՆ

Իտալիայի Ջոյա Տաուրո քաղաքի նավահանգստում ռեկորդային քանակի կոկահին են առգրավել՝ 2.7 տոննա: Թմրանյութի փաթեթները թաքցված են եղել էկվադորից ժամանած երկու բեռնարկղերում, որոնցով տեղափոխվում էր 78 տոննա բանան: Կոկահինը նախատեսված էր Վրաստանի Բաթումիի նավահանգստով Հայաստան ուղարկելու համար:

Թմրանյութերի միջազգային շրջանառության դեմ պայքարի գործողությունը համակարգել եւ գլխավորել է Ռեջո Կալաբրիայի շրջանի մաֆիայի դեմ պայքարի վարչությունը:

Ըստ վարչության տարածած մամուլի հաղորդագրության՝ առգրավված թմրանյութը եղել է «չափազանց բարձր որակի եւ հիանալի պահպանված վիճակում»: Այն թմրանյութեր վաճառողներին կբերեր շուրջ 800 միլիոն եվրոյի եկամուտ:

ANSA-ն նշում է, որ 2021 թ.-ի հունվարից մինչեւ հիմա Ջոյա Տոաուրոյի նավահանգստում իրավապահների կողմից առգրավվել է 37 տոննա կոկահին:

ՏԵՂԱՓՈԽԵԼ ԵՆ ՀՀ ԲՈՒԺՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

Արցախի Հանրապետության առողջապահության նախարարության «Հանրապետական բժշկական կենտրոն»-ից ծանր առողջական վիճակում գտնվող 9 բուժառու 7 ուղեկցողների հետ միասին մայիսի 16-ին ռուս խաղաղապահների ուղեկցությամբ եւ շտապ օգնության մեքենաներով Արցախից տեղափոխվել են ՀՀ մասնագիտացված բժշկական կենտրոններ. տեղեկացնում է Արցախի առողջապահության նախարարությունը:

Տեղափոխության անհնարինության պատճառով վերջին շաբաթներին ավելի քան 100 բուժառու զրկվել է ՀՀ-ում բժշկական օգնություն ստանալու հնարավորությունից, որից 25-ի տեղափոխումը խիստ առաջնահերթ է:

Ապրիլի 29-ից դադարել են Արցախից Կարմիր խաչի միջազգային կոմիտեի միջնորդությամբ բուժառուների տեղափոխումը ՀՀ բուժհաստատություններ, ինչպես նաեւ դեղորայքի մատակարարումը դեպի Արցախ:

ԼՈՒՐԵՐ

ՔՐԵԱԿԱՆ ՀԵՏԱՊՆԴՈՒՄ

«Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնում հայտնաբերված առերեւույթ չարաշահումների վերաբերյալ քրեական գործով (վարույթով) 2023 թվականի մայիսի 12-ին, հսկող դատախազի որոշմամբ, հանրային քրեական հետապնդում է հարուցվել բժշկական կենտրոնի նախկին տնօրեն Ա.Մ.-ին օժանդակող 2 անձի նկատմամբ:

Հիշեցնենք, որ քրեական գործի նախաքննության ընթացքում՝ 2022 թվականի նոյեմբերի 29-ին, բժշկական կենտրոնի նախկին տնօրեն Ա.Մ.-ն ներգրավվել է որպես մեղադրյալ՝ 18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 179-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (երեք դրվագ) (առանձնապես խոշոր չափերի յուրացում կամ վատնում կատարելը), 325-րդ հոդվածի 2-րդ մասով (փաստաթղթեր կեղծելը, իրացնելը կամ օգտագործելը), 38-325-րդ հոդվածի 2-րդ մասով (փաստաթղթեր կեղծելուն, իրացնելուն կամ օգտագործելուն օժանդակելը), 214-րդ հոդվածի 2-րդ մասով (առեւտրային կամ այլ կազմակերպությունների ծառայողների կողմից լիազորությունները չարաշահելը):

2023 թվականի մայիսի 12-ին հսկող դատախազը հանրային քրեական հետապնդում է հարուցել «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» ՓԲ ընկերության մեծահասակների պոլիկլինիկայի վարիչի բուժական գծով տեղակալ Թ.Գ.-ի եւ բժշկական կենտրոնի պետական պատվերի փաստաթղթերի ձեւակերպման աշխատանքների ծառայության ղեկավար Ա.Մ.-ի նկատմամբ՝18.04.2003 թվականին ընդունված Քրեական օրենսգրքի 38-178-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (առանձնապես խոշոր չափերով խարդախությանն օժանդակելը) եւ 325-րդ հոդվածի 2-րդ մասով (փաստաթղթեր, դրոշմներ, կնիքներ, ձեւաթղթեր կեղծելը, իրացնելը կամ օգտագործելը):

Նախաքննությամբ պարզվել է, որ Թ.Գ.-ն, 2004 թվականից աշխատելով «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնի մեծահասակների պոլիկլինիկայի վարիչի բուժական գծով տեղակալի պաշտոնում, 2014 թվականի մայիսից մինչեւ 2017 թվականի սեպտեմբերն ընկած ժամանակահատվածում, բժշկական կենտրոնի պետական պատվերի փաստաթղթերի ձեւակերպման աշխատանքների ծառայության ղեկավար Ա.Մ.-ի եւ բժշկական կենտրոնի այլ աշխատակիցների հանցակցությամբ, օժանդակել է բժշկական կենտրոնի տնօրենի կողմից խարդախությամբ առանձնապես խոշոր չափերով գույքի՝ 908 մլն 47 հազար 850 դրամի հափշտակությանը:

2023 թվականի մայիսի 12-ին հսկող դատախազը հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշումներն ուղարկել է Քննչական կոմիտե Քրեական դատավարության օրենսգրքի 190-րդ հոդվածով սահմանված կարգով մեղադրյալներին նոր մեղադրանք ներկայացնելու նպատակով:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մայիսի 15-ից 16-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 82 դեպք, որոնցից 1-ը՝նախկինում կատարված:*

ՄԱՐԶ

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ՆՈՐ ԾՐԱԳԻՐ

Գործարար Արտակ Չիբուխչյանը, սկսած 2000 թվականից, իր հայրենի գյուղում՝ Իջեւանի տարածաշրջանի Ենոքավան բնակավայրում, քոթեջներով հանգստյան գոտի է հիմնել, իսկ նրա որդին՝ Տիգրանը, նույն տեղում զիփլայն է գործարկել: Ենոքավանը Նիկոլ Փաշինյանի հոր գյուղն է, Նիկոլ Փաշինյանն իր ընտանիքի անդամների կամ ընկերների հետ հաճախ է այցելում Արտակ Չիբուխչյանի «Ապագա տուր» հանգստյան գոտի: Արտակ Չիբուխչյանը այժմ Ենոքավանում կառուցապատման նոր ծրագիր ունի: Իջեւան համայնքի Ենոքավան գյուղի վարչական սահմաններում է գտնվում, Արտակ Չիբուխչյանի սեփականությունն է հանդիսանում 5 հեկտար մակերեսով գյուղատնտեսական, նպատակային արոտավայրի գործառնական նշանակության եւ Ենոքավան բնակավայրի 1-ին փողոցի 71 հասցեում գտնվող 1 հեկտար հողամասը, որը հանդիսանում է գյուղատնտեսական, արդյունաբերության, ընդերքօգտագործման եւ այլ արտադրական օբյեկտների նպատակային, գյուղատնտեսական, արտադրական, արոտավայր գործառնական նշանակության հողամաս: Արտակ Չիբուխչյանը Իջեւանի համայնքապետարան է դիմել այդ հողամասերի նպատակային նշանակությունը փոխելու, այդ հողամասերը բնակավայրերի նպատակային, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողերի շարքին դասելու խնդրանքով: Իջեւան համայնքի ղեկավար Արթուր Ճաղարյանը, հիմք ընդունելով Արտակ Չիբուխչյանի՝ 2023 թվականի փետրվարի 8-ի դիմումը եւ Իջեւան համայնքի ավագանու՝ 2023 թվականի փետրվարի 28-ի նիստի պահանջները, ղեկավարվելով ՀՀ կառավարության՝ 2011թ. նոյեմբերի 29-ի թիվ 1920-Ն որոշմամբ, ՀՀ հողային օրենսգրքի 42 հոդվածի 1,1 եւ 1,2 ենթակետերի դրույթներով, 2023թ. մայիսի 12-ին որոշել է դիմել Տավուշի մարզպետարան Արտակ Չիբուխչյանին պատկանող վերոհիշյալ երկու հողամասերի նպատակային նշանակությունը բնակավայրերի նպատակային, բնակելի կառուցապատման գործառնական հողատեսքի փոխելուն (բնակելի տուն կառուցելու նպատակով) համաձայնություն ստանալու նպատակով:

ՄԱՐԶՊԵՏՆ ՕՐԵՆՔ Է ԽԱԽՏԵԼ

Մայիսի 6-ին Տավուշի մարզի մի շարք հիմնախնդիրների վերաբերյալ տեղեկատվական հարցում եմ ուղարկել Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին՝ խնդրելով հարցումիս պատասխանել օրենքով սահմանված ժամկետում, ըստ էության, հանգամանալից: Ժողովրդավարության բաստիոն հռչակված Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի դասընկեր, նրա հարսանիքի քավոր, Նիկոլ Փաշինյանի որոշումով 2021թ. ապրիլի 8-ին Տավուշի մարզպետ նշանակված Հայկ Ղալումյանը մինչ հիմա չի պատասխանել տեղեկատվական հարցմանս՝ խախտելով «Տեղեկատվության ազատության մասին» օրենքը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԲԱՑՈՒՄ

ՓԱՓՈՒԿ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը Հայաստանի ազգային ագրարային համալսարանում երեկ ներկա է եղել «Փափուկ հմտությունների զարգացման կենտրոն»-ի բացմանը: Կենտրոնում ՀԱԱՀ ուսանողները եւ գյուղատնտեսության ոլորտի մասնագետները կստանան աշխատաշուկայում հաջողելու կարեւոր փափուկ հմտություններ:

Կենտրոնը բացվել է «Փափուկ հմտությունների զարգացումը՝ որպես զբաղվածության հիմնական գործիք» նախագծի շրջանակում, որը համաֆինանսավորել են Չեխիայի, Հունգարիայի, Լեհաստանի եւ Սլովակիայի կառավարությունները Վիշեգրադի միջազգային հիմնադրամի դրամաշնորհների միջոցով: Կենտրոնի բացումը 2022 թվականի հունվարին մեկնարկած եւ այս տարվա հունիսին ավարտվող նախագծի ամփոփումն էր:

Նախարարի տեղակալի դիտարկմամբ՝ համաշխարհային աշխատաշուկան շարունակ ենթարկվում է կառուցվածքային վերափոխումների, որոնք ոչ միայն զարգացման հնարավորություններ են ստեղծում, այլ նաեւ մարտահրավերներ՝ մասնագետների առջեւ նոր տեսակի հմտությունների պահանջ առաջ քաշելով:

«Բեկումնային տեխնոլոգիաները եւ ավտոմատացումը նոր հմտությունների պահանջարկ են առաջացնում ու նոր պահանջներ սահմանում ուսհաստատությունների համար: Մասնագիտական գիտելիքների եւ կարողունակությունների հետ համահունչ՝ մեծ պահանջարկ վայելող հմտությունների շարքում են ինչպես մետահմտությունները՝ մաթեմատիկա, լեզուներ, հիմնարար գիտություն, վերլուծական մտածողություն, այնպես էլ փափուկ հմտությունները՝ հաղորդակցվելու կարողությունները, հուզական ինտելեկտը, առաջնորդությունը եւ սոցիալական ազդեցությունը: ՀՀ կառավարության ծրագրային նպատակներից է մարդու ստեղծարար հմտությունների զարգացումը՝ իբրեւ երկրի զարգացման գրավական: Կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումները միտված են քաղաքակիրթ, ստեղծագործ, նախաձեռնող, կարողունակ քաղաքացու ձեւավորմանը»,- նշել է Արթուր Մարտիրոսյանը:

Նախարարի տեղակալի ընդգծմամբ՝ «Կրթության մինչեւ 2030 թվականի զարգացման պետական ծրագրով» սահմանված են կրթության ոլորտում ՀՀ պետական քաղաքականության ռազմավարական առաջնահերթությունները, որոնց շարքում են նաեւ աշխատաշուկայի պահանջարկին համապատասխան մասնագիտությունների, կրթական ծրագրերի վերանայումն ու լրամշակումը: Նա նշել է, որ ներկայում մշակվող բարձրագույն կրթական ծրագրերի համար հիմք է հանդիսանում որակավորումների ազգային շրջանակը, որը, մասնագիտական հիմնարար գիտելիքներին զուգահեռ, սահմանում է փափուկ հմտություններին հատուկ ուսումնառության վերջնարդյունքներ, օրինակ՝ հաղորդակցման, տեղեկատվական հաղորդակցական տեխնոլոգիաների (ՏՀՏ) եւ տվյալների հետ աշխատելու, ընդհանրական իմացական հմտություններ եւ այլն:

«Մշակման փուլում է նաեւ աշխատանքի վրա հիմնված ուսումնառության հայեցակարգային փաստաթուղթը, որն արդյունավետ միջոց եւ նոր հնարավորություններ կստեղծի ուսանողների համար՝ աշխատավայրում ձեռք բերելու համապատասխան փափուկ հմտություններ: Լիահույս եմ, որ կենտրոնը ամբողջովին ծառայելու է իր նպատակին: Վստահ եմ, որ ՀԱԱՀ-ն էլ իր հերթին կնպաստի վերոնշյալ արդյունքների, նպատակների իրականացմանը, փափուկ հմտությունների զարգացմանն ու մասնագիտական տարբեր ոլորտներում դրանց կիրառմանը»,- ասել է Արթուր Մարտիրոսյանը՝ շնորհակալություն հայտնելով նաեւ Հունգարիայի գյուղատնտեսական եւ կենսագիտական, Նիտրայում Սլովակիայի գյուղատնտեսական եւ Հարավային Բոհեմիայի համալսարաններին 2022 թվականից Հայաստանի ազգային ագրարային համալսարանի համակարգմամբ իրականացվող այս նախագծին օժանդակելու համար:

Գործընկեր համալսարանների ներկայացուցիչների խոսքից հետո ՀՀ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը, ռեկտոր Վարդան Ուռուտյանը եւ հյուրերը բացել են «Փափուկ հմտությունների զարգացման կենտրոն»-ը: Նորաբաց կենտրոնում վերոհիշյալ մոդուլների վերաբերյալ ներկայացումներով հանդես են եկել Ագրարային համալսարանի վերապատրաստված մասնագետները:

ԼՈՒՐԵՐ

ՀԱՐՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

ՀՀ վարչապետի աշխատանքին միանշանակ հավանություն է տվել հարցվածների միայն 11.9 տոկոսը, 24.1 տոկոսը ավելի շուտ հավանություն է տալիս, 12.3 տոկոսը ավելի շուտ հավանություն չի տալիս, 38.7 տոկոսը ընդհանրապես հավանություն չի տալիս:

Այս մասին են վկայում GALLUP International Association-ի հայաստանյան ներկայացուցչության հերթական հետազոտության տվյալները, որոնք ներկայացրել է տնօրեն Արամ Նավասարդյանը:

Կառավարության աշխատանքին միանշանակ հավանություն է տալիս 10.8 տոկոսը, 21.8 տոկոսը ավելի շուտ հավանություն է տալիս, 11.8 տոկոսը ավելի շուտ հավանություն չի տալիս, 42.9 տոկոսը ընդհանրապես հավանություն չի տալիս:

Ազգային ժողովի աշխատանքին հավանություն է տալիս 5.9 տոկոսը, իսկ 50.9 տոկոսը ընդհանրապես հավանություն չի տալիս:

Նախագահի աշխատանքին 8.9 տոկոսը միանշանակ հավանություն է տալիս, 42.4 տոկոսը ընդհանրապես հավանություն չի տալիս:

Ներկա պահին որո՞նք են պետության առջեւ ծառացած երեք ամենակարեւոր խնդիրները. 46.5 տոկոսը նշել է անվտանգության հետ կապված խնդիրները, սահմանների հստակեցման խնդիրներ՝ 37.3 տոկոս, պատերազմի վտանգ՝ 29.4 տոկոս, տնտեսական վիճակ՝ 26.8 տոկոս, Արցախի խնդիր՝ 14.8 տոկոս, գործազրկություն՝ 12 տոկոս, գերիների վերադարձ՝ 9.9 տոկոս:

Հետազոտությունն անցկացվել է ապրիլի 26-30-ն ընկած ժամանակահատվածում 1100 հեռախոսային հարցումների միջոցով:

ԳՆՈՒՄՆԵՐ՝ ՄԵԿ ԱՆՁԻՑ

ՀՀ արտաքին գործերի նախարարությունը մեկ անձից գնումներ է կատարել միջազգային պատվիրակություններին ընդունելու նպատակով: Դրանցից մեկով «Արմենիա» միջազգային օդանավակայանի հետ 115 հազար դրամի պայմանագիր է կնքվել Ֆրանսիայի Եվրոպայի եւ արտաքին գործերի նախարար Կ.Կոլոննայի գլխավորած պատվիրակության պաշտոնական ընդունելությունը կազմակերպելու համար: Ապա «Ֆակտորի փրոդաքշն» ընկերությունից ԱԳՆ-ն մոտ 740 հազար դրամի գնումներ է կատարել: Այդ գումարով կառույցը գնել է թղթապանակներ, նոթատետրեր, գրիչներ: Նաեւ «Վինո-Վինո» ՍՊԸ-ի հետ է 225 հազար դրամի պայմանագիր առկա, որով էլ «Ազնավուր» եւ «Դվին» կոնյակներ են գնվել:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 10 ճՏՊ. 11 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ԼՈՒՐԵՐ

ԱՆԴՐԱԴԱՐՁ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻՆ

ԱՄՆ պետքարտուղարությունը հրապարակել է «Միջազգային կրոնական ազատության մասին 2022 թ. զեկույցը» Ադրբեջանի վերաբերյալ:

Փաստաթղթում հղում է արվում Քորնելի համալսարանի Caucasus Heritage Watch կազմակերպության կողմից սեպտեմբերին հրապարակված հետազոտությանը, որում ընդգծվում է, որ արբանյակային պատկերների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ Նախիջեւանի հայկական 108 միջնադարյան եւ ժամանակակից վանքեր, եկեղեցիներ եւ գերեզմանատներ 1997-2011 թվականների ընթացքում ավերվել են: Դրանցից մի քանիսը, ինչպես, օրինակ, Սուրբ Թովմասի վանքը, վերածվել են մզկիթների կամ այլ հասարակական շենքերի:

«Հոկտեմբերին Caucasus Heritage Watch-ը լրացուցիչ զեկույց է հրապարակել, որում ասվում է, որ մարտ-հուլիս ամիսներին ավերվել է 18-19-րդ դարերի հայկական Սուրբ Սարգիս եկեղեցին: Կազմակերպության տվյալով՝ Սուրբ Սարգիս եկեղեցու ավերումը ՄԱԿ-ի Արդարադատության միջազգային դատարանի 2021 թվականի դեկտեմբերին կայացրած որոշման լուրջ խախտում է»,- նշված է պետքարտուղարության զեկույցում:

Փաստաթղթում անդրադարձ է կատարվում նաեւ կրոնական հաստատություններում անձնակազմի նշանակման նկատմամբ պետության կողմից վերահսկողության սահմանմանը: Նշվում է, որ իրավապաշտպան խմբերը եւ այլ կազմակերպություններ հայտարարել են, որ կառավարությունը շարունակում է քաղաքական դրդապատճառներով ֆիզիկական բռնություն գործադրել եւ ձերբակալել կրոնական ակտիվիստներին:

ԱԺ–Ն ՆՎԵՐՆԵՐ Է ԲԱԺԱՆՈՒՄ

ՀՀ Ազգային ժողովը 25 մլն 250 հազար դրամի պայմանագիր է կնքել «Վիդու Փրեզենթս» ՍՊԸ-ի հետ: Պայմանագրից ArmLur.am-ը տեղեկանում է, որ գնվել է 100 հատ նվեր տուփ, որի մեջ եղել է չիր եւ ուրցով թեյ:

Այլ մանրամասներ նշված չեն, միայն հայտնի է, որ ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար պատվիրակությունների ընդունման եւ արտասահմանյան այցելությունների կազմակերպման համար է իրականացվել այս գնումը: ՍՊԸ-ի մասին տվյալներ համացանցում եւս առկա չեն, միայն հայտնի է, որ տնօրենի անուն-ազգանունը Արամ Ավագյան է:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Team Telecom Armenia

ՄԻԱՎՈՐՎՈՒՄ ԵՆ ԱՇԽԱՐՀԱՀՌՉԱԿ ԲԺԻՇԿՆԵՐ ԵՎ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐ

Հայաստանն առաջին անգամ կհյուրընկալի Մանկական ուռուցքաբանության միջազգային միության ասիական 15-րդ համաժողովը՝ միավորելով աշխարհահռչակ բժիշկների եւ գիտնականների: Բժշկագիտական ոլորտի զարգացմանն աջակցելու եւ միջազգային մասնագետների հետ փորձի փոխանակմանն աջակցելու նպատակով Team Telecom Armenia-ն հայտարարել է SIOP Asia 2023 XV Congress-ի հետ համագործակցության մասին:

Համաժողովի նպատակն է համախմբել մանկական ուռուցքաբանության համաշխարհային հանրությանը՝ ներկայացնելու իրենց հետազոտությունները, պատկերացումները եւ մանկական քաղցկեղի բուժման լավագույն փորձը ամբողջ աշխարհում:

Team Telecom Armenia-ի տնօրեն Հայկ Եսայանը, խոսելով համագործակցության մասին, նշեց, որ իրենց համար կարեւոր է աջակցությունն այնպիսի գիտական նախաձեռնությունների, որոնք Հայաստան են բերում միջազգային փորձը, ամենավերջին հետազոտություններն ու տեխնոլոգիաները. «Այս համաժողովը եւս մեկ առիթ է՝ հիշեցնելու, որ դարի հիվանդության՝ քաղցկեղի կանխարգելման համար յուրաքանչյուրս կարող ենք ունենալ ներդրում»:

Մայիսի 18-21-ն անցկացվող համաժողովի ընթացքում քննարկվելու են քաղցկեղի տարբեր տեսակների ախտորոշման եւ բուժման առանձնահատկությունները, դեղորայքային, ճառագայթային եւ վիրահատական բուժման նորագույն մոտեցումները, ուռուցքաբանական եւ արյունաբանական ծառայությունների կազմակերպումը, լինելու են առանձին սիմպոզիումներ եւ սեմինար- քննարկումներ արդի ամենակարեւոր ուղղությունների վերաբերյալ:

Մանկական ուռուցքաբանության միջազգային միությունն (SIOP) աշխարհում միակ կազմակերպությունն է, որն ամբողջությամբ նվիրված է մանկական եւ դեռահասների քաղցկեղի բոլոր ասպեկտների ուսումնասիրությանն ու բուժմանը, ինչպես նաեւ այդ ոլորտում գիտելիքների ավելացմանն ու զարգացմանը:

SIOP Asia 2023 կազմկոմիտեի նախագահ, Մանկական քաղցկեղի եւ արյան հիվանդությունների կենտրոնի ղեկավար Գեւորգ Թամամյանն ասաց, որ Կոնգրեսը տարվա կարեւորագույն բժշկագիտական միջոցառումն է, որը կնպաստի համաշխարհային քարտեզի վրա Հայաստանի տեսանելիության բարձրացմանը. «Հյուրընկալելու ենք ոլորտի առաջատար կառույցների ու բուհերի ղեկավարների, ինչը եւս մեկ հնարավորություն է ներկայանալու միջազգային հանրությանը որպես լավագույն մասնագետներ եւ ներուժ ունեցող երկիր: Ողջունելի է՝ այս պատասխանատու գործին

իրենց մասնակցությունն են ունենում գաղափարակից ընկերություններ՝ի դեմս Team Telecom Armenia-ի, որոնք կիսում են մեր կարգախոսը՝ «Միասին քաղցկեղի դեմ»»:

Այս առաքելությանն է նվիրված լինելու նաեւ 2023 թվականին անցկացվելիք համաժողովը, որի ընթացքում ելույթով հանդես կգան համաշխարհային ճանաչում ունեցող ոլորտի մասնագետներ, կառույցների եւ գիտական հանձնաժողովների ղեկավարներ ողջ աշխարհից՝ ԱՄՆ-ից, Չինաստանից, Ճապոնիայից, Ռուսաստանից, Հնդկաստանից, Ֆրանսիայից, Գերմանիայից, Իտալիայից, Նիդերլանդներից, Բելգիայից, Իսպանիայից, Լիբանանից, Մեծ Բրիտանիայից, Հունաստանից, Չեխիայից, Լիտվայից, Շվեդիայից եւ այլ երկրներից:

Միջոցառման մանրամասները եւ ծրագիրը ներկայացված են պաշտոնական՝ www.siopasia2023.aշ կայքում:

Հայաստանի մանկական քաղցկեղի եւ արյան հիվանդությունների կենտրոնի մասին տեղեկատվություն կարող եք գտնել սոցիալական մեդիայի էջերից:

Մանկական ուռուցքաբանության միջազգային միության ասիական կոնգրեսի մասին (SIOP Asia)

Մանկական ուռուցքաբանության միջազգային միության ասիական մայրցամաքային մասնաճյուղը հիմնել է իր սեփական միությունը, որը կոչվում է SIOP Asia կամ Asian Society of Pediatric Oncology (Մանկական ուռուցքաբանության ասիական միություն): SIOP

Asia-ն նպատակ ունի նպաստելու քաղցկեղով հիվանդ երեխաների եւ երիտասարդների բարձրորակ խնամքի կազմակերպմանը: Այս միությունը նվիրված է մանկական քաղցկեղի մասին իրազեկվածության բարձրացմանը, ախտորոշման եւ բուժման բարելավմանը:

Team Telecom Armenia-ն ՀՀ տարածքում տրամադրում է ինտերնետի, թվային հեռուստատեսության, բջջային եւ ֆիքսված հեռախոսակապի ծառայություններ:

2021 թվականից ընկերությունը սկսել է տարածաշրջանում եզակի՝25 Գբ/վ արագությամբ 25G-PON տեխնոլոգիայով NGN (Next Generation Network) ցանցի կառուցումը:

Առաջիկայում այս ցանցին կմիացվեն Հայաստանի ողջ տարածքում գործող բջջային կայանները, ինչի շնորհիվ զգալիորեն կբարելավվի նաեւ շարժական կապի որակը:

«ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԳԱՎԱԹ»

ՄՐՑԱՐՇԱՎԸ ԿԱՆՑԿԱՑՎԻ ԵՐԿՐՈՐԴ ԱՆԳԱՄ

ԿԳՄՍ նախարարությունից ArmLur.am-ին հայտնեցին, որ դպրոցականների շրջանում վագքի եւ առողջ ապրելակերպի մասսայականացման, ֆիզկուլտուրայի եւ սպորտի քարոզչության ապահովման նպատակով երկրորդ տարին անընդմեջ ՀՀ Տավուշի մարզում՝ Դիլիջանի Պարզ լիճ տանող ճանապարհին, կանցկացվի «ՀՀ վարչապետի գավաթ» դպրոցականների թիմային խճուղավազք մրցաշարը: Միջոցառմանը կմասնակցեն հանրապետության դպրոցների լավագույն թիմերը, որոնք հաղթող են ճանաչվել մարզային փուլերում:

Մրցաշարին կմասնակցի 11 թիմ, յուրաքանչյուրի կազմում՝ 7 աշակերտ (5 տղա, 2 աղջիկ), որոնք կհաղթահարեն 5000 մետր մրցատարածությունը: Մրցաշարն այս տարի կանցկացվի երկօրյա ձեւաչափով մայիսի 19-ից 20-ը: Եզրափակիչ փուլին 1-ին, 2-րդ եւ 3-րդ տեղեր գրաված դպրոցների թիմերը եւ մասնակիցները կպարգեւատրվեն ԿԳՄՍ նախարարության համապատասխան կարգի հավաստագրերով, գավաթներով, մեդալներով եւ դրամական պարգեւներով: Մասնավորապես, առաջին տեղ զբաղեցրած դպրոցը կստանա 4 մլն դրամ, երկրորդ տեղը՝ 2 մլն 500 հազար դրամ, երրորդ տեղը՝ 1 մլն 500 հազար դրամ: Առաջին տեղ գրաված թիմի ֆիզկուլտուրայի ուսուցիչը կստանա 700 հազար դրամ, իսկ թիմում ընդգրկված 7 աշակերտից յուրաքանչյուրը՝ 150-հազարական դրամ: Երկրորդ եւ երրորդ տեղերի համար սահմանված է համապատասխանաբար 500 հազար դրամ ուսուցչի, 100-հազարական դրամ՝ աշակերտների, 300 հազար դրամ՝ուսուցչի, եւ 75 հազարական դրամ՝ աշակերտների համար (հարկերը, տուրքերը եւ պարտադիր վճարները ներառված չեն):

Խճուղավազքի բոլոր մասնակիցներին կտրվեն մարզաշապիկներ, համարներ եւ հավաստագրեր: Հատկացված գումարով նախատեսվում է նաեւ մասնակիցների համար ապահովել սնունդ, մարզահագուստ (մարզաշապիկ, գլխարկ), ինչպես նաեւ հոգալ գիշերակացի եւ մի շարք այլ ծախսեր:

Միջոցառման անցկացման համար կիրականացվեն տարածքի ձեւավորում, նկարահանում, ուղիղ եթերի ապահովում եւ այլն:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՀԱՅ ԱՍՏՂԵՐ

Ո՞Վ ԻՆՉՔԱՆ ԵԿԱՄՈՒՏ Է ՀԱՅՏԱՐԱՐԱԳՐԵԼ

ArmLur.am-ը Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի պաշտոնական կայքէջից տեղեկացավ, թե հայկական շոու-բիզնեսի հայտնի ներկայացուցիչներից ովքեր են հարկային պարտավորությունները կատարել:

Մասնավորապես՝ հարկային վարչարարության եւ առանձին երգիչ-երգչուհիների իրավագիտակցության բարձր մակարդակի, ինչպես նաեւ համատեղ քննարկումների արդյունքում, ի թիվս սույն թվականի ապրիլ ամսին հայտարարագրեր (հարկային հաշվարկներ) ներկայացրած երգիչների, իրենց եկամուտները հայտարարագրել են Իվետա Մուկուչյանը, Արսեն Սաֆարյանը, Սիլվա Հակոբյանը, Ալբերտ Սիմոնյանը (Թաթան), Արման Հովհաննիսյանը:

Նշենք, որ հարկային վարչարարության ընթացքում պարզվել է, որ երգիչ Անդրեյ Հովնանյանը (Անդրեն) հանդիսանում է նաեւ Ամերիկայի Միացյալ Նահանգների քաղաքացի եւ իր համերգային գործունեությունից Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս ստացված եկամուտներից հարկերը հաշվարկում եւ վճարում է ԱՄՆ-ում:

Հավելենք, որ երեկ Radar Armenia-ն ներկայացրել է շոու-բիզնեսի հայտնի ներկայացուցիչների՝ ինքնակամ շրջանառություն հայտարարագրածների ցանկը՝ 2022 թվականի եւ 2023 թվականի առաջին եռամսյակի արդյունքներով:

ՊԵԿ-ը քանիցս հորդորել է շոու-բիզնեսի ներկայացուցիչներին բարեխղճորեն հայտարարագրել եկամուտները, եւ նշված ցանկում ընդգրկվածների վարքագիծը պետք է օրինակելի դառնա մյուսների համար:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

Անվանում	2022թ.	2023թ. 1-ին կիսամյակ
Իվետա Մուկուչյան	56 մլն	3.5 մլն
«Ամարաս դանս»	55 մլն	11 մլն
«Կրեատիվ դեկոր» (Արամ Mp3)	83 մլն	14 մլն
Հովհաննես Դավթյան	69 մլն	25 մլն
«Վառուվի» ՍՊԸ («Հայաթ պրոջեքթ»)	51 մլն	34 մլն

ՀԱՆՐՈՒԹՅՈՒՆ

«ՄՈՒՂԱՄԸ ՄԵՐՆ Է ԵՂԵԼ». ՍՈՒՊԵՐ ՍԱՔՈ

Մայիսի 14-ին Հանրային հեռուստաընկերությունով հեռարձակվող «Կադրից դուրս» հաղորդման շրջանակներում երգիչ, ռեպեր Սուպեր Սաֆոն անդրադարձել է Կոմիտասի մշակույթին եւ պնդել, որ մուղամը հայկական է եւ ոչ մի կապ չունի մեր հարեւան պետությունների մշակույթի հետ:



ՄԻՋՈՑԱՌՈՒՄ

ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ

Մայիսի 18-ին նշվում է Թանգարանների միջազգային օրը, իսկ մայիսի 20-ին կանցկացվի «Թանգարանների գիշեր» համաեվրոպական միջոցառումը:

2023թ. Թանգարանների միջազգային օրվա խորագիրն է «Թանգարաններ. կայունություն եւ բարեկեցություն», որը եւս մեկ անգամ վերահաստատում է թանգարանների կարեւորագույն դերը համայնքների կայուն զարգացման եւ բարեկեցիկ հասարակության ձեւավորման գործում: Որպես հեղինակավոր հաստատություններ եւ առանցքային հանգույցներ համընդհանուր սոցիալական կառուցվածքում՝ թանգարանները բացառիկ դերակատարում ունեն՝ խթանելու դրական փոփոխությունները եւ նպաստելու կայուն զարգացման նպատակներին:

Այս տարի եւս տոնական միջոցառումները կմեկնարկեն Թանգարանների միջազգային օրը՝ մայիսի 18-ին, եւ կշարունակվեն մայիսի 20-ին «Թանգարանների գիշեր» համաեվրոպական միջոցառմամբ:

Մայիսի 18-ին թանգարաններն անվճար սկզբունքով բաց կլինեն բոլոր այցելուների համար թանգարանի աշխատանքային ժամերին եւ մայիսի 20-ին՝ ժամը 11:00-24:00-ն:

Ծրագրին միացած Հայաստանի եւ Արցախի 116 թանգարաններ՝ որպես մշակութային երկխոսության հարթակներ, 2 օրերի ընթացքում բազմաբովանդակ միջոցառումներով իրենց դռները կբացեն հասարակության առջեւ՝ առաջարկելով այցելուներին բազմապիսի ճանաչողական եւ կրթական թեմատիկ ծրագրեր: Եվս մեկ անգամ կվերարժեւորվի թանգարանների առաքելությունը նորօրյա մարտահրավերների, մշակութային ժառանգության պահպանության եւ բարեկեցիկ հասարակության ձեւավորման համատեքստում:

Նշենք, որ Թանգարանների միջազգային օրը հիմք է դրվել 1977 թվականին Թանգարանների միջազգային խորհրդի կողմից (ԻԿՕՄ): Նպատակն է համախմբելու թանգարաններին հասարակության եւ մարդկության առջեւ ծառացած գլոբալ մարտահրավերների շուրջ: Միաժամանակ այն նպատակ ունի բարձրացնելու հանրային իրազեկվածությունը՝ այդ մարտահրավերների դիմագրավմանն ու լուծմանն ուղղված թանգարանների կարեւորագույն դերի եւ հնարավորությունների մասին:

«Թանգարանների գիշեր» ծրագիրը մեկնարկել է 2005 թվականից՝ Ֆրանսիայի մշակույթի եւ հաղորդակցության նախարարության նախաձեռնությամբ, ԻԿՕՄ-ի, ՅՈՒՆԵՍԿՕ-ի եւ Եվրախորհրդի հովանավորությամբ:

Հայաստանը միացել է «Թանգարանների գիշեր» համաեվրոպական միջոցառմանը 2005 թվականից:

● *Մայիսի 17-ին «Գոյ» թատրոնում տեղի կունենա «Դեպի վերջ» թատերական ներկայացումը: Տոմսերի արժեքը՝3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ՎՃԱՐՆԵՐ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ ապրանքները «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու դեպքում ինչ ժամկետ է տրամադրվում անձին:

Դավիթ Միսակյան (33 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Դ. Միսակյանի հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ անհրաժեշտ է առաջնորդվել Մաքսային միության մաքսային օրենսգրքի 280-րդ հոդվածի դրույթներով, համաձայն որի՝ ապրանքների ժամանակավոր ներմուծման ժամկետը սահմանվում է մաքսային մարմնի կողմից հայտարարատուի դիմումի հիման վրա՝ ելնելով այդ ներմուծման նպատակներից եւ հանգամանքներից, եւ չի կարող գերազանցել 2 (երկու) տարին ապրանքները «ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու օրվանից՝ բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի, երբ ապրանքների առանձին կատեգորիաների համար, կախված Մաքսային միության մաքսային տարածք դրանց ներմուծման նպատակներից, Մաքսային միության հանձնաժողովի կողմից կարող են սահմանվել ժամանակավոր ներմուծման ավելի կարճ կամ ավելի երկար ժամկետներ:

Ապրանքները մի քանի անգամ «ժամանակավոր ներմուծում (թույլտվություն)» մաքսային ընթացակարգով ձեւակերպելու դեպքում, այդ թվում՝ երբ որպես այդ մաքսային ընթացակարգի հայտարարատուներ են հանդես գալիս տարբեր անձինք, ժամանակավոր ներմուծման ընդհանուր ժամկետը չի կարող գերազանցել նշված ժամկետը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Այն ապրանքների նկատմամբ, որոնց համար չի տրամադրվում ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարումից լրիվ պայմանական ազատում, ինչպես նաեւ նշված հոդվածով սահմանված ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարումից լրիվ պայմանական ազատման պայմանները չկատարելու դեպքում կիրառվում է ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարումից մասնակի պայմանական ազատում:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասել՝ դիմումի հիման վրա կազմված վկայականը կամ տեղեկանքը արդյոք պետք է ստանալ այն սպասարկման գրասենյակից, որտեղ ներկայացվել է դիմումը, թե կարելի է ստանալ նաեւ սպասարկման այլ գրասենյակից:

Միեր Մարկոսյան (33 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ տեղեկացնում ենք, որ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման կամ տեղեկատվություն ստանալու համար դիմողներին տրամադրվող ստացականում նշվում է դիմումի մուտքագրման համարը, որը միաժամանակ հանդիսանում է նաեւ ծածկագիր, որի օգնությամբ դիմողը հնարավորություն կունենա Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի պաշտոնական կայքէջի միջոցով հետեւել իր դիմումի քննարկման ընթացքին:

ՀՀ կադաստրի կոմիտե

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման կամ տեղեկատվության տրամադրման դիմումները կարող են ներկայացվել Կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի ցանկացած սպասարկման գրասենյակ կամ օպերատորի մասնաճյուղ՝ անկախ անշարժ գույքի գտնվելու վայրից: Նույնը վերաբերում է նաեւ ներկայացված դիմումի հիման վրա կազմված փաստաթղթերի ստացմանը, որոնք կրկին կարելի է ստանալ ինչպես դիմումը ընդունած, այնպես էլ ցանկացած այլ սպասարկման գրասենյակից կամ օպերատորի մասնաճյուղից:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում

Երեւանի Փավստոս Բուզանդի փողոցի Խաչքարերի պուրակում կայացավ հայ-լեհական դարավոր բարեկամությանը եւ Սբ Հովհաննես Պողոս Բ պապին նվիրված խաչքարի բացման եւ օծման հանդիսավոր արարողությունը:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ __________
Ազգանուն՝ __________
Առաքման հասցե՝ __________
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ __________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ս.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 2 + 2 +13 + 17
Կոտայքի լեռներ	- 2 + 2 +12 + 16
Կոտայքի նախալեռներ	+5 +7 +16 + 19
Գեղարքունիք	- 2 + 2 + 8 + 12
Լոռի	+ 0 + 5 +16 + 19
Տավուշ	+ 3 + 8 +18 + 22
Արագածոտնի լեռներ	- 2 + 1 +14 + 17
Արագածոտնի նախալեռներ	+ 4 + 7 + 16 + 20

Արարատ	+7 + 9 +21 + 23
Արմավիր	-1 +8 +10 + 13
Վայոց ձորի լեռներ	+ 6 + 7 +18 + 20
Վայոց ձորի նախալեռներ	+6 +8 +19 + 22
Սյունիքի հովիտներ	+5 + 9 +16 + 20
Սյունիքի նախալեռներ	- 1 + 4 +13 + 16
Արցախ	+ 7 + 10 +16 + 20
Երեւան	+6 + 8 +20 + 22

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **16.5.2023**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*